



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԿԱՐԴԻՆԱԼ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ ԵՎ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Փյուտքի հայութիւնը, ամեն օր երևան եկող նորանոր փաստերու լույսին տակ, հարաճուն զայրույթով կհաստատեն, որ ամերիկյան իմպերիալիզմը հայ ցեղի դահիճ և երդվյալ թշնամի հետադիմական Թուրքիան տենդագինորեն կզինեն և հարձակողական պատերազմի կպատրաստեն Սովետական Հայաստանի և մեր Սուրիական հայրենիքին դեմ, ինչպես նաև ամբողջ Սովետ. Միութեան և բոլոր խաղաղաբեր երկիրներուն դեմ: Հայաստանի և Սուրիոյ դեմ ուղղված թրքո-ամերիկյան իմպերիալիստական հափշտակիչ պատերազմի այս պատրաստութեան մեջ գործոն դեր կխաղա Վատիկանը և հատկապես անոր հովատարիմ ներկայացուցիչներեն կարդինալ Աղաջանյանը, որուն վիճակված տխուր դերն է՝ պառակտել և քայքայել Հայաստանայայց Առաքելական Մայր Եկեղեցին: Ամերիկյան իմպերիալիզմը, Վատիկան և կարդինալ Աղաջանյանը անհանդուրժելի կգտնեն՝ որ Հայաստանայայց Եկեղեցին հավատարիմ կմնա իր քրիստոնեական հավատքին և կկանգնի ճեղհաղողութուն աշխարհի և հաճութիւն մարդոց միջև՝ սրբազան պատգամին հետեւող աշխարհի խաղաղասիրներու կողքին և կդատապարտեն սատանայական շարիք՝ պատերազմը, անհանդուրժելի կգտնեն՝ որ Հայաստանայայց Եկեղեցին հավատարիմ կմնա իր հայրենասիրական ավանդութիւններուն և իր ժողովրդին և չի դավաճաներ, չի դավադրեր Հայութեան Մայր Հայրենիք Հայաստանին և չի միանար թրքո-ամերիկյան պատերազմի հայասպան հրձիգներուն, և վերջապէս, անհանդուրժելի կգտնեն՝ որ Հայաստանայայց Եկեղեցին հավատարիմ է

իր ապրած երկիրներուն և նոնց ազգային իղեհներուն, ինչպես այդ ցույց տվաւ 1934-ին՝ Լիբանանի և 1945-ին՝ Սուրիոյ մեջ: Կարդինալ Աղաջանյանը կձգտի հայ հավատացյալները քաշել և ենթարկել Վատիկանի փարախին: Վատիկանի փարախին մեջ քաշելով, կարդինալ Աղաջանյան կուզի որ սփյուռքահայութիւնը դառնա ապագայացած, հայրենուրաց, ազգուրաց, իղեհլի և արժանապատւութենէ զուրկ, անկամ էակներու, մեկ խոսքով, կոսմոպոլիտներու ամբողջ մը, որ ծառայի թրքո-ամերիկյան պատերազմի հրձիգներուն և մեղսակից դառնա անոր:

Այլևս ժամանակն է որ սփյուռքահայութիւնը, գոնե մասամբ, ծանոթանա այս կարդինալի իսկական դեմքին, որ 1944—45 թվերուն հաջողած էր Սովետական Հայաստանի գովքն հյուսող իր մեղրածորան, և սակայն կեղծավոր հրապարակային հայտարարութիւններով հայրենասերի անուն շահիլ:

Ծիշտ է, որ Աղաջանյանը ծնած է Կովկաս՝ Հայաստանի հողին վրա, սակայն անոր ապրած մթնոլորտը, սկիզբէն իսկ, եղած է ապագայացած, Հայաստանայայց Մայր Եկեղեցին քանդելու առաքելութիւն ունեցող պապական մարդորսներու, ավելի ճիշտը կրոնական սքեմի տակ ծածկված օտար լրտեսական գործակալներու միջավայրի մը մեջ: Եվ հատկանշական է, թե հարազատորեն հայ ազգային հողամասի վրա ծնած հայ Աղաջանյանին մանկութեան անունն է եղած Ֆրանսուա: Աղաջանյանը իր մանուկ հասակին իսկ պապական մարդորսներու կողմէ հայութենէ խլված է՝ հետագային հայութեան դեմ գործելու համար: Արդարեւ, հազիվ իր պատանեկան

տարիքին ոտք կոխած Ֆրանսուա Աղա-
ջանյան իր ծննդավայրին խուլս տված է
խալալական կեղծ անցագրով և ապաստա-
նած Հոռոմի։ Ան իր կյանքին երեք շորորոզը
անցուցած է Հոռոմի կաթոլիկյան կրոնական
և պրոպագանդի դպրոցներում և այլ հաս-
տատություններում մեջ, դարձած է պապին
ավելի պապական մը և «կաթոլիկության
տիեզերական փառքին համար նվիրյալ
պայքարող մը», վերջնականապես զոհելով
իր հայրենի հավատը, հայրենիքն ու ազգը։
Վատիկանի և խալալական պետության
դեկավարները շատ բան կպարտին Աղա-
ջանյանին։

Խալալ-եթովպիական պատերազմի ըն-
թացքին, Աղաջանյան քաջալերեց Մխի-
թարյանները՝ որպեսզի զանգակ մը նվիրեն
խալալական գրավման ու ֆաշիստ արյու-
նարբուծներու բռնության տակ և վատիկան-
յան միսիոնարներու նենգամիտ դավերով
հիմնված կաթոլիկյան առաջին եկեղեցիին։

Հայ ըլլալն ավելի Վատիկանյան միջադ-
րային պետության մեկ գործակալն է Աղա-
ջանյան, ինչպես որ իր համայնքին պատ-
րիարք ըլլալն առաջ ան եղած է դասատու
«պրոպագանդաֆիտե» («հավատքի տարա-
ծումը») վարժարանին, որում իսկական
դերն է Վատիկանի լրտեսական սպասար-
կության համար դաստիարակված գործա-
կալներ հայթայթել բոլոր երկիրներու հա-
մար։

Պապին և Մուսոլինիի հանդեպ ունեցած
իր հավատարմության համար Աղաջանյան
պատրիարք նշանակվեցավ հայ կաթոլիկ-
ներու համայնքին։ Արդարեւ, Վատիկանի
ավանդական քաղաքականությունն է եղած
հայ կաթոլիկ եկեղեցականներին մշտապես
առաջ քաշել անոնք՝ որոնք ամենեն շատ
հայության տառապանքներն և ազգային
հարազատ զգացումներն դուրս ապրած են։

1937 թվին Սուրիո և Լիբանանի ֆրան-
սիական մարզական Բոնի Դը Մարթիի պա-
հանջով «Արևելքի կարդինալ» օծվեցավ
Սուրիո կաթոլիկներու պատրիարք Թափու-
նին։ Հոռոմի ֆաշիստական կառավարու-
թյունը անմիջական պապին պահանջեց
ապագա կարդինալցուններու ցանկին մեջ
անցնել «հոռոմեական» պատրիարք Աղա-
ջանյանին անունը, որպես իր բարեկամն ու
գործակիցը։

Համաշխարհային վերջին ինդհանուր
պատերազմին, բազմաթիվ երիտասարդ հայ
կաթոլիկներ Հունաստանին Սուրիա և Լի-
բանան ղրկվեցան դժուրացնելու համար
այս երկիրներու գրավմամբ խալալ-գերմա-
նական բանակներու կողմն։ Ֆրանսիական

Ընդհանուր Ապահովությունը ձերբակալեց
և զնդակահարեց այդ երիտասարդները։

Այս դեպքը Հակապիսիստ լավ կհիշեն։
Տեսնելով որ առանցքի պետությանց
պարտությունը մոտալուտ է, Վատիկանը
դիմաշրջեց իր քաղաքականությունը և իր
գինակցությունը առաջարկեց Ամերիկային։
Հակառակ անոր որ Ամերիկյան կառավա-
րությունը ճանչցած էր Վատիկանյան
պետությունը, ան հաճույքով ընդունեց
Պապին առաջարկը և Նյու Յորքի Արքեպիս-
կոպոս Սփեյմանը Պապին մոտ առաքեց,
որպես Ամերիկայի ներկայացուցիչ։ Արքե-
պիսկոպոս Սփեյման Վատիկանը տեղյակ
պահեց Ամերիկայի «բարի տրամադրու-
թյուններուն» մասին և ապա այցելեց Մեր-
ձավուր-Արևելքի արաբական երկիրները։
Պեյրուի հասնելով, Արքեպիսկոպոս Սփեյ-
ման ուղղակի իջևանեցավ իր դասընկեր
պատրիարք Աղաջանյանի մոտ, ուր նա հյուս-
մնաց մինչև իր մեկնումը։ Այդ օրվան
սկսյալ, կարդինալ Աղաջանյան ամերիկա-
ցիներու հետ մոլի գործակցող մը դարձավ
Արևելքի մեջ, և ամերիկացիներու պահան-
ջով Հոռոմի կողմն օծվեցավ «Հայաստանի
կարդինալ»։

Երբ ֆրանսիացիներու մարդը՝ կարդինալ
Թափունին կպահանջեր «ֆրանսիական
պաշտպանությունը», նույն ատեն կարդի-
նալ Աղաջանյան կպահանջեր «ամերիկա-
ցիներու պաշտպանությունը»։

Կարդինալ Աղաջանյան պատերազմի
հրձիգ ամերիկյան իմպերիալիստներու հաշ-
վույն կաշխատի նաև միջազգային մարզի
մեջ։ Ան երկու լարի վրա խաղաց նաև պա-
ղեստինյան վերջին պատերազմի ընթաց-
քին։— մեկ կողմեն արաբները կհավաս-
տիացնեն թե Պապին պիտի պահանջե որ-
պեսզի «աշխարհի չորս հարյուր միլիոն
կաթոլիկները զորաշարժի ենթարկե՝ փըր-
կելու համար Սուրբ երկիրը», իսկ մյուս
կողմն՝ երեք միլիոն հրեա բնակիչ ունե-
ցող Նյու-Յորքի կարդինալ և իր բարեկամ
Սփեյմանին հետ համաձայնության կու-
գար ստեղծելու համար լիբանո-պաղեստին-
յան համադաշնակցություն (կոնֆեդերասիոն)
մը, որ պիտի ֆինանսավորվեր Ամերիկայի
սիոնիստներու դրամազուլումով, ինչ որ
փաստորեն պիտի նշանակեր այդ երկիրնե-
րու վրա Ամերիկայի սիոնիստներուն տի-
րապետությունը։

Արդ, այս բոլոր իրողությունները կփաս-
տեն հակահայ և հակաարաբ քաղաքակա-
նությունը այս կարդինալին, որ ծագումով
հայ մըն է՝ դժբախտաբար։ Մենք հայերս,
չենք մոռնար, չենք կրնար մոռնալ բարիք-

ները արաբներուն, որոնք մեզ ընդունեցին իրենց հայրենիքին ներս և մեզի օգնեցին, երբ դավաճանված և լքված էինք անոնց կողմն, որոնք հետագային ալ սիոնիստներուն օգնեցին իրենց ծննդավայրին վտարելու և գաղթական դարձնելու համար մեկ միլիոն արաբները: Մեր երկու, հայ և արաբ ժողովուրդները անբաժանելի եղբայրներ են՝ միացած անկախության, ազատության և խաղաղության համար օտար իմպերիալիստներու դեմ մղված պայքարի տառապանքներուն մեջ:

Կարդինալ Աղաջանյան և իր գործակիցները կըսեն— «Պետք է հնազանդիլ Պապին, պետք է զոհել գիտնալ երկրային հայրենիքը՝ արժանանալու համար երկնային դրախտին»: Միթե ամերիկացի, ֆրանսիացի, իտալացի, անգլիացի, գերմանացի կարդինալներն ու եկեղեցականները կզոհեն իրենց հայրենիքները Աստծո թագավորութենէն ներս ընդունվելու համար:

Միթե մեր կաթոլիկ կրօնականները այնքա՛ն կարճատես և տգետ են, որ չեն տեսներ Վատիկանի հակաքրիստոնեական և հակահայ այս քաղաքականությունը:

Ինչո՞ւ համար Վատիկանը մշտապես հալածեց և հարկաժեց հայ կաթոլիկներու այն եպիսկոպոսները, որոնք իրենք զիրենք ՀԱՅ կղզային: Ինչո՞ւ համար Վատիկանը հազար ու մեկ դավերով և միջամտություններով, լազմաթիվ անդամ արգելք եղած Նազլյան Գերապայծառի հայ կաթոլիկներու պատրիարք ընտրության: Ինչո՞ւ Վատիկանը հակողության տակ առած և պարտադիր բնակության դատապարտած է այս հայ եկեղեցականը:

Արդարև, երբ մեկուսացված Գերապայծառ Նազլյան իր առանձնության մեջ կողբա 1914—1918 թ. պատերազմին թրքոգերմաններուն ջարդած հայներ, մյուս կողմն, միևնույն ատեն, կարդինալ Աղաջանյան, իրեն ընդհանուր փոխանորդ Պաթանյան Գերապայծառին հետ միասին Թուրքիա կայցելե և սիրո ողջույններ կփոխանակե մեր մեկ միլիոն եղբայրներու դահիճներուն հետ, կանիծե Սովետական Հայաստանն ու հայրենադարձը և կօրհնե թրքո-ամերիկյան պատերազմի պատրաստությունը, Հայություն Մայր հայրենիքին դեմ:

«Պապը Գերապայծառ Նազլյանը դատապարտած է ազգամոլության համար» կըսեն Վատիկանի գործակալները:

Բայց, Պապը ինչո՞ւ չդատապարտեց իտալացի այն կարդինալները, արքեպիսկոպոսները ու եպիսկոպոսները, որոնք իրենց ոսկեխաչերը հոժարությունը նվիրեցին Մու-

սոլինիի հաղթանակին համար Եթովպիո մեջ: Ինչո՞ւ համար պապը իր իտալացի կրօնավորները, 45 կարդինալներն ու 300 արքեպիսկոպոսները ոտքի չհանեց Մուսոլինիի դեմ, արգելելու համար կործանումը կաթոլիկ Ֆրանսիային, Լեհաստանին, Զեխուսովաքիո և այլ կաթոլիկ երկրներուն:

Եվ համաշխարհային երկրորդ պատերազմն վերջ, Պապը ինչո՞ւ համար վարձատրեց Առանցքի կողմնակից կաթոլիկ արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսները:

Վատիկանը երեկ կծառայեր պատերազմի հրձիգ Հիտլերին և Մուսոլինիին, իսկ այն այսօր կծառայե պատերազմի հրձիգ ամերիկյան իմպերիալիզմին:

Գերապայծառ Պաթանյան և «Հայաստանի կարդինալը» հրահանգ ստացան համաձայնելու համար թուրքերուն հետ՝ ամրացնելու համար Պապին և Տրոսենի Մերձավոր և Միջին Արևելքներու մեջ հետապնդած թրքանպաստ հակահայ քաղաքականությունը:

Զոգոհեցնելու համար մեր մեկ միլիոն ցեղակիցներու դահիճ հետադիմական մարդասպան թուրքերը, անոնք կարգելին Գերապայծառ Նազլյանը, որ հրատարակություն տա «1914—1918-ի ընդհանուր պատերազմի ընթացքին թուրք հետադիմական կառավարության կողմն սպանված հայ կաթոլիկ կրօնավորներու և կրօնավորուհիներու պատմությունը»: Հրեշավոր... չէ՞: Եվ սակայն իրականություն:

Եթե «Հայաստանի կարդինալին» Թուրքիո մեջ կատարված ճամբորդությունը միայն հովվական այցելություն մըն էր, ապա ինչո՞ւ համար էին անոր թրքական և հակահայ և զգայացունց հայտարարությունները, և ինչո՞ւ համար հովվական նման այցելություն մը չի կատարեր կարդինալ Թափունի մը, որ կարդինալ Աղաջանյանին ավելի շատ հավատացյալներ և շահեր ունի Թուրքիո մեջ:

Սակայն այս մարդին մեջ, կարդինալ Թափունին կարդինալ Աղաջանյանին բոլորովին տարբեր կիտրոհ, և ասիկա միայն հարգանք կներշնչե իրեն հանդեպ: Արդարև կարդինալ Թափունին կհայտարարե. «Ես չեմ կրնար ներել թուրքերուն: Եվ եթե ես ներեմ, Աստված չի ներել անոնց իրենց երկրի խաղաղ բնակչությանց հանդեպ գործադրված ոճիրներն ու շարիքները: Եվ կարդինալ Թափունին, ակնարկելով Աղաջանյանի Թուրքիա այցելության կհայտարարե. «Կարդինալ Աղաջանյան իր ազգին հանդեպ հավատարիմ չմնաց...»: Ինչ դաս Սուրիո կաթոլիկ կարդինալ Թափունին

«Հայաստանի կարդինալ» Աղաջանյանին և ընդհանուր փոխանորդ պատահական հայ Գերապայծառ Պաթանյանին (մոնսեներ Պաթանյանի)։

Կարելի է թերևս մասամբ ներողամտությամբ դիտել «Հայաստանի կարդինալին» ստորաքարշությունն ու ստորնացումը, եթե այդ բոլորը գոնե ծառայեր իր համայնքին։ Սակայն այս է իրողությունը։ Կարդինալ Աղաջանյանի հայ կաթողիկոսներու հոգևոր պետ դառնալեն ի վեր կրողավորներու մոլեռանդությունը (ֆանատիզմ) ավելացավ, հայ կաթողիկոսներուն կարգելի ամուսնություն կնքել ոչ կաթողիկ հայերու հետ, անոնց կարգելի աղոթել կամ նույնիսկ ներկա ըլլալ Հայաստանյայց Մայր Եկեղեցիներեն ներս, կմյուսնաղոթեն այն ամեն հայ կաթողիկ, որ ինքզինքը կապված կնկատե իր Մայր Հայրենիքին և կխոսի Սովետական Հայաստանի մեր եղբայրներու մշակութային, դիտական և տնտեսական հաջողություններու մասին։

Կըսեն թե «Պապը մեր հոգևոր հայրն է և թե ամբողջ աշխարհի մեջ մենք չորս հարյուր միլիոն կաթողիկ եղբայրներ ունինք»։ Այդ պարագային ինչո՞ւ համար կարդինալ Աղաջանյան այս հոգևոր հայրերեն չի պահանջեր փրկել այն բազմահարյուր հայ կաթողիկները, որոնք երեսուն տարի ի վեր պարտավորված են բնակիլ այնպիսի տախտակաշեն տուններու մեջ, ուր ամերիկացիները պիտի չուզեն նույնիսկ իրենց խոզերը բնակեցնել։

Հասարակաց այս հայրը, որ աշխարհի բոլոր պետություններուն ամենեն հարուստ գանձն ունի և միլիոններ կծախսե իտալացի «սովահարները» կերակրելու համար, որպեսզի անոնք ապրին թագավորներու պես մեծաշուք պալատներու մեջ, ինչո՞ւ համար ան կանտեսե հայ կաթողիկ դժբախտ չքավորները։

Պատասխանը պարզ է։ Կարդինալ Աղաջանյան հայրենասեր մը չէ և ոչ ալ ՀԱՅ կաթողիկոսներուն նվիրված պետ մը։ Ան վատիկանի պաշտոնյա մըն է պարզապես։ Այն օրը որ ան համաթճակի հետեիլ իր ժողովուրդին գերագույն շահերուն և զգացնե թե կաթողիկ ըլլալն առաջ ՀԱՅ մըն է, ինք ևս պիտի ենթարկվի այն վիճակին, որուն ենթարկված է «ազգամուլ» Գերապայծառ Նազյանը։

Հոռվմանական եկեղեցվո իշխանի իր դիրքը պահպանելու համար, կարդինալ Աղաջանյան պարտավորված է զոհել իր ժողովուրդին ազգային շահերը և իր այն հավատաց-

յալները, որոնք կապրին խոզերու հատուկ «բնակավայրերու» մեջ, անգործ, առանց բժշկական խնամքի, քաղցի և թշվառության մեջ։ Այս թշվառ հավատացյալներու շարժումն և անշարժ ինքքերը թալանված են նույն այդ թուրքերու կողմեն, որոնք ներկայիս Ամերիկայեն առատորեն կստանան ռազմանյութ, օդանավ, հրասալ, զնդացիք և այլն, կործանելու համար մեր Մայր Հայրենիքը, որուն ինքն ալ մեկ զավակն ըլլալը կը պնդե «Հայաստանի կարդինալը»։

Քանի մը ամիս առաջ, կարդինալ Աղաջանյան կազմակերպել տվավ մեր ազգային հերոս Վարդան Մամիկոնյանի և իր ընկերներուն հիշատակելի 1500-ամյակին նվիրված հրապարակային հանդես մը, ուր ան դատապարտեց հայրենադավ Վասակը։ Արդ, ո՞վ է Վասակը։ Միթե ներկայիս կարդինալ Աղաջանյանի գործերը Վասակի հայրենադավությունն կտարբերին։ Միթե իրական Վասակ մը չէ՞ կարդինալ Աղաջանյան, երբ համախորհուրդ կարտահայտվի այն թուրքերուն հետ, որոնք սրբապղծեցին և քարուքանդ ըրին մեր հազարավոր եկեղեցիները, սովամահություն մը պանեցին մեր որբերը, Մալաթիո հայ կաթողիկ Արքեպիսկոպոսին պորտու վրա խարույկ վառեցին սուրճ եփելու համար, ամայացուցին Թրքահայաստանը, տակավին քանի մը ամիս առաջ ուժանակով օդը հանեցին և գետնի հավասարեցուցին Սեբաստիո պատմական կիսավեր Մայր Տաճարը։ Միթե մեր օրերու իրական Վասակ մը չէ՞ կարդինալ Աղաջանյանը, երբ կղավակցի այն թուրքերուն հետ, որոնց դերագույն նպատակն է երկրի երեսն սրբել Հայաստանն ու հայ ժողովուրդը։

Բայց, ապագան վասակներուն չի պատկանիր։ Ապագան կպատկանի խաղաղության ճակատին, այսինքն անոնց, որոնք կպայքարին «երկրի վրա խաղաղության և մարդոց միջև հաճություն» համար։ Հայ հայրենասեր ժողովուրդը, մյուս ժողովուրդներու հետ և Սովորի և Լիբանանի մեջ արաբ ժողովուրդներուն հետ միասին, առանց հարանվանական բաժանումի, վճռականություն մը կպայքարի խաղաղության հաղթանակի համար։

Իրենց հոգվույն խորքին մեջ, և առօրյա պայքարին մեջ, խաղաղության և Հայաստանի հետ են և վասակներու դեմ են նաև իրենց քրիստոնեական զեղծված հավատքին հավատարիմ հայրենասեր ՀԱՅ կաթողիկոսները, որոնք անկասկած, խոշորագույն մեծամասնությունը կկազմեն իրենց համայնքին։

«Սուրիա», 15 հոկտ. 1951 թ.